ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԿԵՐՊԱՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ինչպես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում, այնպես էլ Ընդհանրական Եկեղեցում, Հովհաննես Մկրտիչը դասվում է աստվածաշնչական սրբերի շարքում եւ ունի գերագույն պատիվ: Այս հանգամանքն ամենեւին էլ պատահական չէ. Ավետարանների մեջ Հովհաննեսը, թերեւս, Հիսուսից հետո ամենաազդեցիկ եւ ամենասիրված կերպարն է, մեկը, ով եղավ Նոր Կտակարանի սկիզբը եւ «քրիստոնէական եկեղեցիի դարաշրջանը պաշտօնապէս բացողը»[1]: Նա առաջինն էր, որ իր ձայնը հնչեցնում էր բոլորի համար, առաջինն էր, որ մարդուն կոչ էր անում ընթանալու դեպի առաքինի գործերն ու նպատակները եւ իր օրինակով ուղղորդում էր դեպի լավն ու բարին, առաջինն էր, որ մատնացույց էր անում դարերով սպասված Փրկչին, եւ որ, բոլորից մեծագույնը լինելով, խոնարհագույնն էր բոլորից՝ ազդու օրինակ ժամանակակիցների եւ, ինչու չէ, նաեւ հետագա սերունդների համար: «Դիւրին է զինք երեւակայել, ծառի մը ծուռ ճիւղէն շինուած գաւազանը ձեռքին, խանձած դէմքով, բարձրահասակ, ոսկրոտ բաց կուրծքը մազոտ, վայրի տեսքով անապատական մը, այս «մագնիսացնող վայրագը» (Պապինի): Զարմանալի է, որ Հրէայ հերոսական դէմքերու մէջ միակն է որ ընկերային, տնտեսական պաշտօն մը չունի: Ո՛չ հովիւ է, ո՛չ երկրագործ, ոչ մէկ դասակարգի կը պատկանի»[2]:

Բազմազան ու բազմաբովանդակ է Հովհաննես Մկրտչին նվիրված գրականությունը՝ սկսած եկեղեցական գրականությունից մինչեւ գեղարվեստական, չափազանց լայն է նրա թողած ազդեցությունը կյանքի գործնական ոլորտում՝ սկսած ծիսակատարություններից եւ ավարտած արվեստով: Սակայն, այսքանով հանդերձ, որքան էլ որ զարմանալի է այս կարեւոր սրբի վերաբերյալ ամբողջական, համապարփակ, նրա կերպարն ու գործն ընդհանրացնող, նրան ըստ ամենայնի ներկայացնող որեւէ աշխատություն ցարդ հայ գրականությունից ներս չենք հանդիպել: Մկրտչին նվիրված բոլոր երկերը հայ իրականության մեջ նրա կյանքի կամ գործունեության որեւէ դիպվածին կամ յուրահատուկ կողմին նվիրված երկեր ու աշխատություններ են: Անշուշտ, եղած գրականությունը բավարար է որոշակի պատկերացում կազմելու համար, սակայն նպատակահարմար գտանք մեր այս հոդվածի միջոցով ավելի մանրամասնորեն դիտարկել «Հովհաննես Մկրտիչ» անհատականությանը եւ, ի մի բերելով հայ ու հատկապես վերջին շրջանի համաշխարհային գիտական նվաճումները՝ համապարփակ ներկայացնել Սուրբ Հովհաննես Մկրտչի կերպարին եւ գործին առնչվող մեկնաբանությունները:

Սույն հոդվածը բաղկացած է երեք մասերից որոնցից յուրաքանչյուրում ներկայացվում

1 **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան**, Աստուածաշնչական Սուրբեր, Երեւան, 1997, էջ 163:

2 **Բ. Եղիայեան,** Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, Դ գիրք, Ներածութիւն Նոր Կտակարանի, Անթիլիաս-Լիբանան, 1974, էջ 921 (այսուհետեւ՝ **Եղիայեան**):

է Հովհաննես Մկրտչի կյանքի որոշակի փուլ՝ Սուրբ Գրքի, քրիստոնեական պարականոն եւ սրբախոսական գրականությունների տրամադրած նյութերի ու վկայությունների հիման վրա.

**Ա** մասը վերնագրված է «**Հովհաննես Մկրտչի ծնունդն ու մանկությունը**», որտեղ խոսվում է Մկրտչի ծննդյան ավետման, ծնունդի, մանկության շրջանի ու կենսակերպի եւ Քումրանի համայնքի հետ հնարավոր կապի մասին:

**Բ** մասը վերնագրված է «**Հովհաննես Մկրտչի քարոզչությունը (վկայությունը) եւ Հիսուսի մկրտությունը**», որտեղ խոսվում է Մկրտչի՝ ասպարեզ դուրս գալու եւ քարոզելու, Փրկչին ներկայացնելու եւ նրա մասին վկայելու մասին, ապա եւ ներկայացվում է Հիսուսի մկրտությունը Հովհաննեսից:

**Գ** մասում, որն ունի «**Հովհաննես Մկրտչի բանտարկությունը եւ գլխատումը**» խորագիրը, պատմվում է Մկրտչի՝ Հերովդես Անտիպասի կողմից բանտարկման, Հովհաննեսի աշակերտների, նրանց՝ Հիսուսի մոտ առաքման մասին, եւ թեման փակվում է Հովհաննես Մկրտչի գլխատումով:

***

Հատկանշական է, որ ավետարանական վկայությունների հետ երբեմն տրվող պարականոն գրականության նման կամ զուգահեռ հատվածները գալիս են հաստատելու կամ մերժելու ավետարանական իրողությունը, իսկ երբեմն էլ՝ մեկ այլ տարբերակ ներկայացնելու: Ճիշտ է, պարականոն գրականությունն իր ուշ շրջանի ծագման (Բ-Դ դդ) եւ ծածկամիտ ու ստահոդ «նորամուծությունների» պատճառով Եկեղեցու կողմից հիմնականում խոտելի է դիտվել եւ դուրս է թողնվել աստվածաշնչական կանոնից, սակայն այսօր գիտական աշխարհում քրիստոնեական պարականոնները պատմական տեսանկյունից կարեւոր նշանակություն ունեն. դրանք մեզ են փոխանցում Ա դարի մտածելակերպն ու գաղափարախոսությունները, առաջին քրիստոնյաների բարքերն ու սովորությունները, հաճախ որպես մեկնաբան են հանդես գալիս վաղ արվեստի այս կամ այն դրվագը ըմբռնելու հարցում, ճշմարտորեն մեզ են փոխանցում վաղ շրջանի քրիստոնեության ավանդությունները[3]:

Մյուս կողմից աստվածաշնչական եւ պարականոն տեղեկությունները հարստացրել ու համալրել ենք սրբախոսական գրականության (հիմնականում հայ) գեղեցիկ, իսկ հաճախ էլ հրաշապատում (այս վերջինները հնարավորինս փորձել ենք զանց առնել) գեղարվեստական դրվագներով, որոնք իրենց հերթին բացատրություններ ու մեկնաբանություններ են տալիս Մկրտչի կյանքի շատ մանրամասների վերաբերյալ եւ փորձում են բացահայտել նրա կյանքի՝ Սուրբ Գրքով մեզ չավանդված բազում դրվագներ:

Կարծում ենք այս համադրությամբ կարելի կլինի ամբողջական տեսք ու պատկեր ստանալ Հովհաննես Մկրտչի անձի ու գործունեության վերաբերյալ:

Բնականաբար, Հովհաննես Մկրտչի վերաբերյալ ամենահավաստի տեղեկությունները

---

3 Առավել մանրամասն տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 857-858 (այսուհետեւ՝ Քրիստոնյա Հայաստան): **Եզնիկ Ծ. Վարդապետ Պետրոսյան** (այժմ՝ արքեպիսկոպոս), Հայրաբանություն, Ա Մաս (Բ-Գ դդ), Ս. Էջմիածին, 1996, էջ 157-162 (այսուհետեւ՝ Հայրաբանություն):

կարող ենք գտնել Սուրբ Գրքում, ուստի հոդվածի համար հիմնական աղբյուր ծառայում է Սուրբ Գիրքը՝ ի մասնավորի Ավետարանը: Հայ իրականության մեջ Աստվածաշունչ մատյանի մի քանի տպագրությունների շարքում նախընտրելի համարեցինք «Զոհրապյան» հրատարակությունը[4] դրան զուգահեռ (տեքստային համեմատությունների համար) ունենալով արդի արեւելահայերեն[5], 1896թ. տպագրած «Արարատ»[6], ռուսերեն (սինոդալ)[7], անգլերեն (նոր միջազգային տարբերակ)[8], հունարեն (Յոթանասնից թարգմանություն[9] եւ Նոր Կտակարան[10]) օրինակները: Սուրբգրային ուղղակի մեջբերումների պարագայում լիարժեքորեն պահպանել ենք կետադրությունը եւ ուղղագրությունը՝ դրանց արդիականացմամբ չխախտելու համար ճիշտ բովանդակությունը:

Ինչպես արդեն նշեցինք, ուշադրություն ենք դարձրել հիմնականում Հորոս Ավետարանների՝ երեք համատեսների (Մարկոս, Մատթեոս, Ղուկաս) եւ Հովհաննեսի Ավետարանի վրա, որոնցից յուրաքանչյուրի հեղինակն ընդհանրությամբ հանդերձ (օրինակ՝ Հորոսն էլ Մկրտչին են համարում Քրիստոնեական դարաշրջանի սկիզբ՝ այդ անուղղակիորեն արտահայտելով իրենց գրվածքների սկզբում) յուրովի է անդրադառնում Հովհաննես Մկրտչին եւ նրան ներկայացնում իրեն հարմար տեսանկյունից[11]: Այսպես՝

**ա.** Մարկոսը, ում Ավետարանն ամենից հին է եւ աղբյուր է մյուս համատեսների համար, Հովհաննես Մկրտչին ներկայացնում է որպես մի մարգարեի, ով պիտի առաջինը գար եւ կազմակերպեր Մեսիայի գալուստը[12]:

**բ.** Մատթեոսն իր Ավետարանում Հովհաննեսին ճանաչում է որպես Մեսիայի սուրհանդակ եւ Հիսուսի հետ միասին ընդդիմախոս ու քննադատ տիրող հոգեւոր եւ քաղաքական վիճակի[13]:

**գ.** Ղուկասը Մկրտչին դիտում է որպես փրկության պատմության մեջ կարեւոր անձ: Նա բազում նմանություններ է առաջ քաշում Հովհաննեսի եւ Հիսուսի միջեւ եւ դրանով կարծես ընդգծում է նրանց հաջորդականությունը[14]: Այստեղ եւս Հովհաննեսը Հիսուսի կարապետն է, սակայն նա, միեւնույն ժամանակ, խորհրդանիշն է մարգարեության կատարման[15]:

---

4 «Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի հայկական բարբառ, Յաշխատասիրութենէ Տեառն Հ. Յովհաննու Զոհրապեան վարդապետի ի միաբանութենէ մեծին Մխիթարեան բարեբանութեան եւ առաջին աբբայի», Վենետիկ, 1805 (այսուհետեւ՝ Զոհրապեան Աստուածաշունչ):

5 «Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների», Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 2004 (այսուհետեւ՝ Աստուածաշունչ Մատեան (արեւելահայերեն)):

6 «Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների», Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 2005 (այսուհետեւ՝ «Արարատ» տպագրություն):

7 "Библия, Книги священного писания Ветхого и Нового Завета", Объединение библейские общества, 1992 (այսուհետեւ՝ Библия):

8 "The NIV Bible", Hodder և Stoughton, London, Sydney, Auckland, 2003 (այսուհետեւ՝ NIV "Bible"):

9 "Septuaginta, Editio altera quam recognovit et emendavit Robert Hanhart, Stuttgart, 2006 (այսուհետեւ՝ LXX):

10 "Новый Завет на Греческом и Русском языках", Российское библейское общество, Москва, 2002 (այսուհետեւ՝ Новый Завет на Греческом):

11 "Иисус и Евангелия", Словарь под редакцией Джоэля Грина, Скота Макнайта, Говарда Мармалла, Москва, 2003, стр. 267 (այսուհետեւ՝ "Иисус и Евангелия").

12 "Иисус и Евангелия, стр. 267. "Всемирная Энциклопедия Христианство", Минск, 2004. стр. 270 (այսուհետեւ՝ "Христианство"). հմմտ. Մրկ. Ա 1-10:

13 "Иисус и Евангелия", стр. 267. "Христианство", стр. 270.

14 "Иисус и Евангелия", стр. 267.

15 "Христианство", стр. 270-271.

**դ.** Հովհաննես ավետարանիչը Մկրտչին ներկայացնում է այնպիսի գծերով, որոնք չեն համապատասխանում մյուս Ավետարանների վկայություններին[16]: Այստեղ նա նախ առանձնացվում է Եղիայից[17] եւ կարծես ներկայանում է որպես իդեալական քրիստոնյա, ապա եւ ամեն կերպ խոստովանում է իր՝ Քրիստոսից ստորադաս լինելը[18]:

Մկրտչի վերաբերյալ անդրադարձներ են հանդիպում նաեւ Գործք Առաքելոցում եւ մարգարեություններում՝ Հին Կտակարանում:

Քրիստոնեական պարականոն գրականությունից աշխատանքի համար աղբյուր են ծառայել հատվածներն **Էբիոնիտների ավետարանից** եւ **Եբրայեցիների ավետարանից, Հակոբոսի նախաավետարանը, Թովմասի ավետարանը** կամ **Քրիստոսի մանկության գիրքը, Նիկոդեմոսի ավետարանը** (**Գիրք Պիղատոսի**), **Հակոբոս Տյառնեղբոր վկայաբանությունը**[19]:

Սրբախոսական գրականության սահմաններից ներս ընդգրկել ենք Հ. Մկրտիչ Ավգերյանի «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց» աշխատության առաջին երեք հատորները[20] եւ հայսմավուրքային մի քանի խմբագրություններ՝ Տեր Իսրայելի անունով հայտնի, իրականում Գրիգոր Է Անավարզեցու խմբագրած[21] 1834թ. Հայսմավուրքը[22], Գրիգոր Ծերենց Խլաթեցու՝ 1706թ. տպագրված Հայսմավուրքը[23] եւ հունվար ամիսը նախածերենցյան յոթ խմբագրությունների՝ ըստ Եզնիկ արքեպս. Պեպրոսյանի կազմած «Համաբարբառ հայսմավուրքի»[24]:

Որոշ դեպքերում օգտակար են եղել նաեւ Ս. Գրիգոր Տաթեւացու հեղինակած «Ճմեռան հատորում»[25] տեղ գտած քարոզների որոշ հատվածներ, որոնք ունեն վարքագրական բնույթ:

**Ա. Հովհաննես Մկրտչի ծնունդն ու մանկությունը:** Չորս Ավետարանների շարքում Ղուկասի Ավետարանը (գրվել է Ք.հ. 70 թ. «ոչ շատ ուշ»[26] մոտ 80թ.[27], Հրեական

16 **Давид Штраус**. *Жизнь Иисуса*, **Эрнест Ренан**. *Жизнь Иисуса*, Харьков, Москва, 2000, стр. 484 (այսուհետեւ՝Жизнь Иисуса).

17 Հմմտ. Հովհ. Ա 21-22:

18 "Иисус и Евангелия", стр. 267. "Христианство", стр. 271.

19 Մանրամասների համար տես J. W. Rogerson և Judith M. Lieu (ed.), *The Oxford Handbook of Biblical Studies*, Oxford 2006, pp. 532-536. Սույն պարականոնները պատկանում են հիմնականում Բ-Գ դդ. քրիստոնեական եկեղեցական մտքին: Նրանցից մի քանիսը հայերեն են թարգմանվել վաղ միջնադարում, տես Թանգարան հայկական Հին եւ Նոր դպրութեանց, Բ. Անկանոն Գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ 1898, Ա-ԺԵ:

20 **Մկրտիչ վրդ. Աւգերեան**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, Հատոր Ապայից, Վենետիկ, 1810 (այսուհետեւ՝ **Աւգերեան,** Ա): **Մկրտիչ վրդ. Աւգերեան**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. Բ, Վենետիկ, 1811 (այսուհետեւ՝ **Աւգերեան,** Բ): **Մկրտիչ վրդ. Աւգերեան**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. Գ, Վենետիկ, 1812 (այսուհետեւ՝ **Աւգերեան,** Գ):

21 Այս մասին մանրամասն տես **Մայիս Ավդալբեգյան**, «Յայսմաւուրք» ժողովածուները եւ նրանց պատմագրական արժեքը», Երեւան, 1982, էջ 55:

22 Յայսմաւուրք ըստ կարգի ընդարձակագոյն օրինակի Յայսմավուրաց Տէր Իսրայէլի, Կոստանդնուպօլիս, 1834 (այսուհետեւ՝Յայսմաւուրք 1834):

23 Յայսմաւուրք, Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարգվանեցու, 1706 (այսուհետեւ՝Յայսմաւուրք 1706):

24 Համաբարբառ Յայսմաւուրք, Ա, Յունուար, (նախածերենցյան 7 խմբագրությունների), աշխատասիրությամբ **Եզնիկ արքեպս. Պեպրոսյանի**, Ս. Էջմիածին, 2008 (այսուհետեւ՝Համաբարբառ Յայսմաւուրք):

25 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Ճմեռան հատոր, Երուսաղեմ, 1998 (այսուհետեւ՝Ճմեռան):

26 **Եզնիկ Ծ. վրդ. Պեպրոսյան** (այժմ՝ արքեպիսկոպոս), Ներածություն Նոր Կտակարանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1996, էջ 49 (այսուհետեւ՝Ներածություն Նոր Կտակարանի):

27 Համատես Ավետարանները, աշխատասիրությամբ **Տ. Ներսես ավ. Քհն. Ներսեսյանի**, Հայաստանի Ազգվածաշնչային ընկերություն, 2007, էջ VII (այսուհետեւ՝Համատես Ավետարանները):

պատերազմի (Ք.հ. 66-73թթ.) եւ 90թ. միջեւ)[28] միակն է եւ բացառիկը, որ մեզ պատմում է Հովհաննես Մկրտչի ծննդյան եւ դրան նախորդող ու հաջորդող իրադարձությունների մասին: Ժամանակագրական հաջորդականությամբ պայմանավորված՝ այս դեպքերը զբաղեցնում են Ղուկասի Ավետարանի Ա գլուխը: Ժամանակակից նորկտակարանյան ուսումնասիրության ոլորտում մեծավ մասամբ ընդունված է Ղուկասի համար աղբյուրներ համարել Մարկոսի Ավետարանը (գրվել է 64-70 թթ. միջակայքում[29]), բոլոր համատեսների համար հիմք համարվող «Q» աղբյուրը եւ Ղուկասի համար ինքնուրույն աղբյուր համարվող «L»-ը, որից չի օգտվել մյուս ավետարանիչներից եւ ոչ մեկը: J. H. Ropes-ն իր «The Synoptic Gospels»[30] (թրգ.՝ «Համատես Ավետարանները»[31]) աշխատության մեջ կարծիք է արտահայտում, որ Ղուկասի Ավետարանի առաջին 2 գլուխները հավանաբար թարգմանություն են ինչ-որ մի եբրայական գրքույկից: Այս ենթադրյալ աղբյուրը՝ Ropes-ը պայմանականորեն անվանում է «I» («infancy», թրգ.՝մանկություն): Ահա հավանաբար այս («L» եւ «I») աղբյուրներն են հիմք ծառայել Ղուկասի համար՝ նկարագրելու Հովհաննես Մկրտչի ծննդյան ավետումը եւ դրա հետ կապված իրադարձությունները[32]:

Առհասարակ, հարկ է նշել, որ Ղուկասի ներկայացրած պատմության որոշ մասեր Հովհաննես Մկրտչի նախընթաց կյանքի վերաբերյալ իրենց զուգահեռ օրինակներն ունեն Հին Կտակարանում: Սա ուշ շրջանի հրեական գրական ժանրերից է եւ արտացոլում է փվյալ ժամանակաշրջանի փիրապետող գաղափարախոսությունը: Բանն այն է, որ հրեաներն ապրում էին անցյալի պատմությամբ եւ Սուրբ Գրքերով, որոնցում շարադրված էր իրենց պատմությունը, այնպես որ ավելի ուշ շրջանի պատմությունները եւ փաստերը նրանք համարում էին կանխասված մարգարեությամբ[33]: Այնուամենայնիվ, Ղուկաս Ավետարանիչը լոկ նմանակող չէ. նա ինքնուրույն պատմություններ է ներկայացնում՝ մատնանշելով սեփական նպատակը[34]:

Այսպիսով իրեն հատուկ ոճով[35] (հմմտ. Ղուկ. Բ 1, Գ 1-2) Ղուկասը դեպքի նկարագրությունն սկսում է՝տալով ժամանակի կառավարչի ղեկավարման շրջանը. «յաւուրս Հերովդի արքայի Հրեաստանի» (Ղուկ. Ա 5): Այս Հերովդեսը, որ թագավորել է Հրեաստանում Ք. ա. 37- Ք. հ. 4 թթ. Անտիպատրոսի որդին էր, եդոմացի էր ու թեեւ ամուսնացել էր հրեա

28 **Stephen L. Harris**. The New Testament, 2001, p. 181 (այսուհետեւ՝**Harris**):

29 Ներածություն Նոր Կտակարանի, էջ 34: Համատես Ավետարանները, էջ VII. **Harris**, p. 119.

30 Ըստ՝ **William Barclay**. "The Gospels and Acts" գրքի, Vol. 1, The first Three Gospels, Liverpool, 1976 p. 201-202, (այսուհետեւ՝"The first Three Gospels").

31 Այստեղ եւ այսուհետ օտար լեզուներից թարգմանությունները մերն են (*Ա.Ս.*):

32 Չենք բացառում նաեւ, որ դեպքերի մի մասը Ղուկասին կարող են այս կամ այն կերպ (տե՛ս օրինակ՝ **Ա. Լ. Գայսեան**, «Նոր Կտակարանի Ընդհանուր Ներածություն», Հայաստան, 2003, էջ 264 (այսուհետեւ՝**Գայսեան**) փոխանցվել Մարիամ Կույսից, ով անմիջական մասնակիցն էր եղել որոշ դեպքերի (հմմտ. Ղուկ. Ա 56), (տե՛ս **Կրեյգ Քիներ**, «Աստվածաշունչ՝ հենքի մեկնություն. Նոր Կտակարան», Հայ Ավետարանչական ընկերություն, Երեւան, 2004, էջ 211-212 (այսուհետեւ՝**Քիներ**)):

33 "The Oxford Bible Commentary", Oxford, 2007, p. 926 (այսուհետեւ՝"The Oxford Bible Commentary"). "New Bible Commentary", Inter-Varsity Press, Leicester, England, 2005, p. 981 (այսուհետեւ՝"New Bible Commentary").

34 "Жизнь Иисуса", стр. 422.

35 Այս ոճն առհասարակ հատուկ է ժամանակի պատմագիրներին (տե՛ս **William Barclay**. "The Gospel of Luke", Edinburg, 1975, p. 31 (այսուհետեւ՝**Barclay**. The Gospel of Luke), A. T. Robertson, Studies in the Text of the New Testament, 2002², Biblical Library, Digital Edition pp. 112-116):

կնոջ՝ քահանայապետի դուստր՝ Մարիամնեի հետ եւ առերես ընդունել հրեական հավատքը, նրա թագավորությունը հաճելի չէր հրեաներին. նրանք այս արյունարբու բռնակալին չէին համարում յուրային[36]: Հերովդես Մեծի օրոք ծնվեց Հիսուս (Մատթ. Բ 1), եւ նրա օրոք ու հրամանով տեղի ունեցավ Բեթղեհեմի մանուկների կոտորածը (Մտ Բ 16-18)[37]:

Այնուհետեւ Ղուկասի Ավետարանը նշում է. «Քահանա՛յ ոմն՝ անուն Զաքա՛րիա ի դասակարգէ Աբիայ. եւ կին նորա ի դստերա՛ց Ահարովնի, եւ անուն նորա Եղիսաբե՛թ» (Ղուկ Ա 5): Մկրտչի ծնողների մասին ակնարկում է նաեւ Էբիոնիտների ավետարանը, որտեղ ասվում է. «Նրա (Հովհաննես Մկրտչի - *Ա.Ս.*) մասին ասված է, որ նա եղել է Ահարոնի ցեղից՝ որդին Զաքարիայի եւ Եղիսաբեթի...»[38]: Դեռեւս Դավիթ արքայի կողմից հաստատվել էր, որ Ահարոնի երկու որդիներից՝ Եղիազարից եւ Իթամարից սերող քահանաները բաժանվեն 24 դասի (Ա Մն ԻԴ 7-18): Այդ դասերից ութերորդի գլուխ էր կանգնած Աբիան (Ա Մն. ԻԴ 10, Նմ. ԺԲ 17[39]), ում դասի ժառանգական ներկայացուցիչներից էր Զաքարիան[40], մի արդար մարդ, ով իր կնոջ՝ Եղիսաբեթի հետ ընթանում էր «յամենայն պատուիրանս եւ յիրաւունս Տեառն» (Ղուկ Ա 6): Եղիսաբեթը նույնպես ծագում է քահանայական ընտանիքից՝ Ահարոնի սերնդից: Առհասարակ, քահանաները պետք է ամուսնանային բացառապես հրեական ծագում ունեցող կանանց հետ, եւ գովելի էր, եթե կինն Ահարոնի քահանայական ընտանիքից էր[41]: Սուրբ Գիրքը նշում է, որ Եղիսաբեթն ազգական էր Սուրբ Կույս Մարիամին (Ղուկ Ա 36): Ըստ ավանդության՝ Եղիսաբեթի պապը՝ Մատթան քահանան, երեք դուստր ուներ՝ Աննան, որ մայրը եղավ Աստվածածնի, Սովվեն, որ Եղիսաբեթի մայրը եղավ եւ Մարիամը (մայրն էր Զեբեդեոսի կին Սաղոմեի)[42], հետեւաբար «Մկրտիչն Յովհաննես եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս մօրաքեռորդւոյն որդիք»[43] էին: Այն, որ Հովհաննես Մկրտիչը ծագումով երկկողմանի Ահարոնի սերնդից էր, նրան իրավունք էր տալիս քահանա լինելու[44]: Հատկանշական է, որ այստեղից սկսած աչքի են զարնում նմանությունները հինկտակարանյան օրինակների հետ: Այսպես, Սամուել մարգարեն նույնպես՝ որպես Աստծո ընտրյալ ծառա, նորհրեական ավանդության մեջ համարվում է Ղեւիի քահանայական ընտանիքից սերած, քանի որ թագավորների օծումը կատարում էին քահանայապետները (Գ Թագ Ա 39): Հինկտակարանյան նմանություն է ներկայացնում նաեւ Եղիսաբեթի՝ ամուլ

---

36 **Գայանեան**, էջ 96-97: **Քիներ**, էջ 208: **Архиепископ Аверкий**. Четвероевангелие, Москва, 1999, стр. 46 (այսուհետեւ՝ "Четвероевангелие"):

37 Հերովդես Մեծի մասին առավել մանրամասն, տե՛ս **Иосиф Флавий**. "Иудейские Древности", В 2-х томах. Москва, 1996, т. 2, гл. 14-17, стр. 49-210 (այսուհետեւ՝ Иудейские Древности):

38 "Апокрифы древних христиан" (Иследование, тексты, комментарии), Москва, 1989, стр. 66 (այսուհետեւ՝ "Апокрифы древних христиан").

39 Սույն համարը բացակայում է թե՛ Զոհրապեան Աստուածաշնչում, թե՛ աշխարհաբար արեւելահայերեն գրաբերակում, սակայն առկա է «Արարատ» գրագրության, անգլերեն եւ ռուսերեն թարգմանություններում:

40 "Толковая Библия, или комментарии на все книги Св. Писания Ветхого и Нового Завета", Новий Завет. т. 1, Москва, 2007, стр. 754 (այսուհետեւ՝ Толковая Библия). "Четвероевангелие", стр. 46. "New Bible Commentary", p. 982.

41 **Barclay**. The Gospel of Luke p. 10. **Քիներ**, էջ 208:

42 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Համապատում, Մայր Աթոռ Սուրբ Էջմածին, 1997, էջ 24 (այսուհետեւ՝ Համապատում): **Արամ Դիլանյան**, Տերունական գոներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2006, էջ 540 (այսուհետեւ՝ Տերունական գոներ):

43 **Ագերեան** Ա, էջ 31:

44 "Толковая Библия", стр. 754.

ու անզավակ լինելու հանգամանքը (Ղկ Ա 7). ինչպես Սամուելի մայր Աննան (Ա Թագ Ա 2-3), այնպես էլ Աբրահամի կին Սառան (Ծն ԺԸ 10, ԻԱ 2) եւ Սամփսոնի մայրը (Դատ ԺԳ 2-3) անպտուղ էին, իսկ Սառայի եւ Աբրահամի, ինչպես նաեւ Եղիսաբեթի ու Զաքարիայի պարագային օգտագործվում է «անցեալք զաւուրքք»[45] արտահայտությունը (Ծննդ. ԺԸ 11, Ղուկ. Ա 7)[46]:

Հրեական միջավայրում անզավակ լինելը մեծ դժբախտություն էր համարվում եւ դիտվում էր որպես Աստծո պատիժ, երբեմն էլ՝ մեղքի հետեւանք[47]. այն Աստծուց մարդուն բաժանող 7 հանգամանքներից առաջինն էր: Այս պարագան անգամ կնոջից բաժանվելու առիթ կարող էր հանդիսանալ[48]:

Ղուկասն այնուհետեւ Հին Կտակարանից, այսպես ասած, «արտատպում» է Հովհաննես Մկրտչի ծննդյան ավետմանը նախորդող դրվագը. Սամուելի մայր Աննան իր որդու ծննդյան լուրն ստացավ աղոթքի ժամանակ (Ա Թագ Ա գլուխ)[49] նման Զաքարիային, ում համար Ղուկասը գրում է «՝ի քահանայանալն նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ առաջի Աստուծոյ» (Ղուկ Ա 8): Չնայած Ղուկասը Զաքարիային հստակորեն անվանում է քահանա՝ քիչ չեն դեպքերը (նկատելի է հատկապես եկեղեցական հայրերի մոտ), երբ Զաքարիան անվանվում է քահանայապետ: Սակայն հրեա պատմիչ Հովսեփոս Փլաբիոսն իր «Հրեական հնախոսությունների» մեջ Հերովդես Մեծի կառավարման շրջանում որպես քահանայապետ հիշատակում է Սիմոն անունով մեկին, ով միաժամանակ Հերովդեսի աներն էր, եւ չի հիշատակում Զաքարիա անունով որեւիցե այլ մեկի[50]: Թյուրիմացության առիթ, հնարավոր է, հանդիսացել են որոշ նմուշներ քրիստոնեական պարականոն գրականությունից: Այսպես՝ «Քրիստոսի մանկության գրքում» («Գիրք տղայութեան») ասվում է. «...մեծ քահանայապետն Եղիազար վախճանեցաւ եւ սուգ առեալ ի վերայ նորա՝ լային զնա որդիքն Իսրայելի աւուրս երեսուն: Ապա յետ այսր ամենայնի եղեւ ժողով քահանայիցն եւ ծերոցն եւ այլոցն՝ խորհուրդ արարեալ լացուցանել քահանայապետ տաճարին, եւ արկանել վիճակս: Եւ ել վիճակն Զաքարիայի որդւոյ Բարաքեայ եւ զնա ձեռնադրեալ քահանայիցն ամենեցուն եւ եդին զնա սպասաւոր սրբութեան սեղանոյն»[51]: Կարծիք կա, որ Զաքարիան էր օրինավոր քահանայապետը, իսկ Սիմոնը նրանցից, ովքեր Հերովդեսից էին նշանակված եւ նրա կամակատարներն էին[52] (Հերովդեսի՝ ինքնակամ քահանայապետներ նշանակելու մասին, վկայում է Հովսեփոս Փլաբիոսը[53]): Այնուամենայնիվ, հավատարիմ մնալով Ղուկասին՝ Զաքարիան պարզ քահանա էր, ով իր կարգի օրերին Աստծո առջեւ կատարում էր

45 «Անցեալք զաւուրքք» (Աստուածաշունչ Մատեան (արեւելահայերեն)-ում թարգմանված է «առաջացած տարիքում») արտահայտությունը ոմանց կարծիքով (տե՛ս **Քիներ**, էջ 208) շուրջ 60 տարեկանն է, սակայն նկատենք, որ Իսահակը ծնվեց, երբ Աբրահամը 100 տարեկան էր (Ծննդ. ԻԱ 5):

46 "Жизнь Иисуса", стр. 419-420.

47 "Толковая Библия", стр. 754. "Четвероевангелие", стр. 46. "New Bible Commentary", p. 982.

48 **Barclay**. The Gospel of Luke, p. 10. **Քիներ**, էջ 208:

49 "Жизнь Иисуса", стр. 420.

50 "Иудейские Древности", т. 2, 18/5:1, стр. 223. "Толковая Библия", стр. 754.

51 Թանգարան Հայկական Հին եւ Նոր դպրութեանց, հ. Բ, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 7 (այսուհետեւ՝ Անկանոն գիրք Նոր Կտակարանաց):

52 **Ալգերեան** Ա, էջ 29-30:

53 Տե՛ս օրինակ՝ "Иудейские Древности", т. 2, 15/3:1, стр. 102. **Евсевий Памфил**. Церковная история, Санкт-Петербург, 2007, стр. 29 (այսուհետեւ՝ "Церковная история"). **Գայեան**, էջ 124:

իր պաշտոնը (Ղուկ. Ա 8): Քանի որ քահանաների եւ ղեւտացիների թիվն այդ ժամանակ հասնում էր 20.000-ի, ստացվում է, որ քահանայական յուրաքանչյուր դաս բաղկացած էր շուրջ 1000 հոգուց: Միայն Զաքկին, Պենտեկոստեին եւ Տաղավարահարաց տոներին էր, որ ծառայություն կարող էին մատուցել բոլոր քահանաները: Մնացյալ ժամանակ նրանք ազատ էին. միայն թե յուրաքանչյուր դաս տարվա մեջ ծառայում էր եւս 2 անգամ մեկական շաբաթով: Մեծ տոներին պաշտոնները բաշխվում էին քահանաների միջեւ վիճակահանությամբ: Յուրաքանչյուր օր ժողովուրդն առավոտյան եւ երեկոյան զոհաբերություն էր կատարում: Դրանցից առաջ ծիսական խնկարկություն էր նշանակված. քահանան մտնում էր Սրբարան՝ Տաճարի ներքին՝ երկրորդ մաս, եւ խնկարկում էր զոհն ու զոհասեղանը. խնկարկությամբ էր սկսվում եւ ավարտվում զոհաբերությունը: Այդ օրը վիճակն ընկավ Զաքարիային, եւ նրան վիճակվեց «խո՛ւնկ արկանել՝ մտեալ 'ի տաճարն Տեառն» (Ղուկ. Ա 9): Նա, ում բաժին էր հասնում խնկարկությունը, համարվում էր Աստծո կողմից ընտրյալ, քանի որ շատ քահանաներ կյանքի ընթացքում այդ սպասված պահին կարող էին եւ չարժանանալ[54]:

Այժմ անհրաժեշտ ենք համարում հստակեցնել, թե ե՞րբ էր Զաքարիայի ծառայությունը՝ ըստ այդմ որոշելով նաեւ Հովհաննես Մկրտչի ծննդյան ավետման թվականը: Ճիշտ թվականը որոշելու համար հարկ է ճշտել Հիսուս Քրիստոսի ծննդյան թվականը: Այսօր, բազմակարծությամբ հանդերձ, ընդունված է, որ Հիսուս ծնվել է Հռոմի հիմնադրման 749-750թթ., որ մեր թվագրմամբ[55] լինում է մ.թ.ա.[56] 4թ.[57]: Հայտնի է, որ Հովհաննես Մկրտիչը ծնվել է Հիսուսից 6 ամիս առաջ (Ղկ Ա 26, 36), ուստիեւ Զաքարիայի կարգի օրերն ընկնում են Ք.ա. 5-4թթ. միջեւ: Մեկ այլ բարդություն է իրենից ներկայացնում խնկարկության օրվա ճշգրիտ որոշելը, որին կանդրադառնանք հրեշտակապետի հայտնությունը եւ Մկրտչի ծննդյան ավետումը ներկայացնելիս:

Ղուկասն այս մասին գրում է. «Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն. զի կայր ընդ աջմէ սեղանոյ խընկոցն: Եւ խռովեցա՛ Զաքարիա՝ իբրեւ եդեսս, եւ անկաւ ահ 'ի վերայ նորա: Ասէ ցնա հրեշտակն Տեառն. Մի՛ երկնչիր Զաքարիա, զի լսելի՛ եղեն աղօթք քո, եւ կին քո Եղիսաբեթ՝ ծնցի՛ քեզ որդի՛, եւ կոչեսցես զանուն նորա Յովհաննէս» (Ղուկ. Ա 11-13): Հին Կտակարանում այսպիսի դրվագ, երբ հրեշտակը հայտնվում է անզավակ մարդուն, առկա է Դատավորաց գրքում, որտեղ հրեշտակը, անվանվելով «այր Աստուծոյ», ինչը Գաբրիել անվան նշանակությունն է, Սամփսոնի մորը հայտնում է զավակ ունենալու լուրը (Դատ. ԺԳ 3, 6)[58]:

Հրեշտակի հայտնվելը վախեցնում է Զաքարիային. սա հավանաբար կապված էր հրեական այն ավանդության հետ, թե հրեշտակի հայտնվելը մոտալուտ մահվան նշան է

54 **Barclay**. The Gospel of Luke, p.9, 10. "Четвероевангелие", стр. 46-47. **Քիներ**, էջ 208-209: **Գայանան**, էջ 124-125: "Толковая Библия", стр. 755. "New Bible Commentary", p. 982.

55 Մեր այսօրվա թվագրությունը հիմնվում է Դիոնիսիոս Փոքրի (Ջ դար) թյուր հաշվարկի վրա (տե՛ս "Четвероевангелие", стр. 54. "Церковная история", стр. 26. **Амброджо Донини.** У истоков Христианства, Москва, 1989, стр. 63 (այսուհետեւ՝ Донини):

56 Այստեղ բացառության կարգով օգտագործում ենք «մ.թ.ա.», քանի որ գրամաբանական չէ ասել, թե Քրիստոս ծնվել է Քրիստոսից առաջ 4 թվականին:

57 "Четвероевангелие", стр. 54-55. "Церковная история", стр. 26. **Донини**, стр. 63. **Եղիայան**, էջ 892-893:

58 "Жизнь Иисуса", стр. 420.

(հմմտ. Դապ. Զ 22-23, ԺԳ 22)[59] կամ Զաքարիան սահմռկեց այն գաղափարից թե պիտի մեռնի, քանի որ Աստծուն է տեսել (հմմտ. Ելք Լ 20): Հրեշտակը հորդորում է ծեր քահանային չվախենալ, քանզի նրա աղոթքները լսելի եղան Աստծո առջեւ: Դժվար է ասել, թե ինչ աղոթք էր անում Զաքարիան այդ պահին: Ահա թե ինչ պատմություն է ներկայացված պարականոն աղբյուրում[60]. Զաքարիայի քահանայապետ ընտրվելուց որոշ ժամանակ հետո ժողովուրդը եւ քահանաները նկատում են, որ Զաքարիան անզավակ է եւ արժան չեն համարում նրան քահանայապետության: Քահանաները հանձնարարում են Ղեւի անունով մի քահանայի այդ մասին ծածուկ հայտնել Զաքարիային, եւ Ղեւին մի օր աղոթքի ժամանակ ծածուկ հայտնում է Զաքարիային ամենը: Այս լսելով՝ Զաքարիան սաստիկ տրտմում ու սկսում է մտածել.

«Զի՞նչ արարից եւ կամ զի՞նչ տաց պատասխանի, զի ես զանձնէ իմմէ վնաս իրաց գործ ոչ գիտեմ եւ եթէ զուր ատեն զիս անմեղութեամբ, զի այն միայն ինքն Տէր քննեսցէ: Եւ եթէ արձակեմ զկին իմ առանց իրիք վնասու պատճառաց, ծանր մեղք է ինձ: Եթե վնաս համարին ինձ ունել, զի եւ քակիցիմ եւ եթէ ի սպասաւորութենէ սրբոյ սեղանոյս, եւ ի քահանայապետութենէ աստի լռեալ ի բաց կայցեմ, կարի դժուարին է ինձ: Զի՞նչ լինիցիմ արդեօք, քանզի յոյժ տարակուսեալ եմ ցավագին անձամբ»:

Եվ Զաքարիան արտասվախառն սկսում է աղոթել խորանի դիմաց.

«Տէր Աստուած հարցն մերոց, Աստուա՛ծ Իսրայելի, հայեաց ողորմութեամբ քով ի ծառայս քո, որ կամ ամօթով առաջի տէրութեանդ քո եւ հայցեմ ի բարերար քաղցրութենէ կամաց քոց. մի՛ անտես առներ զծառայս քո, եթէ արժանի համարիս զիս սպասաւորել սրբոյ սեղանոյ քո, արա՛ առ իս զգութ մարդասիրութեան քո, որ միայնդ ես ողորմած եւ կարօղ յամենայնի: Եւ քեզ փառք յաւիտեանս, ամէն»: Այնուհետեւ հայտնվում է Տիրոջ հրեշտակը եւ Զաքարիայի հետ ունենում այն զրույցը, որը, թեեւ ոչ բառացիորեն, բայց առկա է Ղուկասի մոտ:

Որոշ մեկնաբաններ կարծում են, թե որպես աստվածապաշտ մարդ՝Զաքարիան դժվար թե աղոթեր Աստծուն՝ խնդրելով իրեն որդի պարգեւել, ինչպես հասկացվում է Ղուկասի մեջբերած բացատրությունից՝ «Կին քո Եղիսաբեթ՝ ծնցի՛ քեզ որդի՛, եւ կոչեսցես զանուն նորա Յովհաննէս» (Ղուկ. Ա 13): Մեկնաբաններն առավել հավանական են համարում այն, որ Զաքարիան աղոթում էր՝ Իսրայելին շնորհելու երկար սպասված Մեսիային[61]: Սա համապատասխանում է Ղուկասի բացատրության հետ, քանի որ մանուկը, որ պիտի ծնվեր Զաքարիայից եւ Եղիսաբեթից, պիտի լիներ փրկության ավետաբերը, ինչն ավելի մանրամասնում է հրեշտակը հետագա տողերում՝ ուրվագծելով Հովհաննեսի[62] անցնելիք ճանապարհը.

«Եւ եղիցի քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն. եւ բազումք 'ի ծննդեան նորա խնդասցեն.

59 "Толковая Библия", стр. 756.

60 Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 7-9:

61 "Толковая Библия", стр. 756.

62 Ծնվել պատրաստվող մանկան անունը նախապես հայտնելը Հին Կտակարանում առկա է Ծնն. ԺՁ 11, ԺԷ 19 համարներում (այս վերջին համարը տե՛ս «Արարատ» տպագրություն եւ "NIV Bible" տարբերակներում)՝ Իսմայելի եւ Իսահակի պարագաներում ("Жизнь Иисуса", стр. 421): Ընդհանրապես զավակին անուն տալը հոր իրավունքն էր, բայց այն, որ անունը տրվում էր Աստծո կողմից, անսակարկելիորեն նշանակում էր, որ մանուկն ընտրյալ է ("New Bible Commentary", p. 982):

զի եղիցի մեծ առաջի Տեառն. եւ գինի՛ եւ օղի՛ մի՛ արբցէ. եւ Հոգւով Սրբով լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ. եւ զբազումս յորդւոցն Իսրայէլի դարձուսցէ 'ի Տէր Աստուած իւրեանց: Եւ ինքն եկեսցէ՛ առաջի նորա հոգւով զօրութեամբ Եղիայի, դարձուցանել զսիրտս հարց յորդիս, եւ զանհաւանս յիմաստութիւն արդարոց. պատրաստե՛լ Տեառն ժողովուրդ կազմեալ» (Ղուկ. Ա 14-17): Ըստ հրեշտակապետի՝ մանուկը ոչ միայն սփոփանք էր լինելու ծնողների համար ծերության օրերին, այլեւ շատերը պիտի ցնծային նրանով, որովհետեւ Հովհաննեսը մեծ պիտի լիներ Տիրոջ առջեւ: Այնուհետեւ Ղուկասը կարծես բացատրում է, թե ո՛րն է Հովհաննեսի մեծությունը. նախ՝ նա իր խիստ պահեցողությամբ պետք է գերազանցեր բոլորին, գինի եւ օղի նրա շուրթերին չպիտի դիպչեին[63] (նույնը Սամփսոնի համար էր ասվել (Դատ. ԺԳ 17), եւ նույնը խոստացել էր Աննան՝ Սամուելի մայրը (Ա Թագ. Ա 11)), ինչպես Տերը պատվիրել էր ուխտ անողներին (Թվ. Զ 2-4)[64]: Գինու եւ օղու ոգեւորող ազդեցության փոխարեն Հովհաննեսը դեռեւս մոր որովայնից պիտի ցնծա եւ լցված լինի Սուրբ Հոգով: Սա իր հինկտակարանյան նախատիպն է գտնում Երեմիա մարգարեի անձնական օրինակում (Երեմ. Ա 5) եւ Դատավորաց գրքում (հմմտ. Դատ. ԺԳ 5, 24), քրտոզ Սամփսոնին Աստված օրհնեց եւ «սկսաւ Հոգի Տեառն շրջե՛լ ընդ նմա»[65]: Այնուհետեւ հրեշտակը հայտնում է, որ Հովհաննեսը պիտի շարժվի հինկտակարանյան մարգարեներից ամենանախանձահույզի՝ Եղիայի[66] հոգով եւ զորությամբ՝ կարգավորում մտցնելու ամենուր՝ «պատրաստե՛լ Տեառն ժողովուրդ կազմեալ» (Ղուկ. Ա 17), ինչպես մարգարեացել էր Մաղաքիան՝ վերջինը հինկտակարանյան մարգարեներից (Մղ Դ 4-5): Հրեշտակի խոսքերն անհեթեթության աստիճան անհավանական են թվում, քանի որ Զաքարիան եւ Եղիսաբեթը շատ ծեր էին, ուստի Զաքարիան հարցնում է. «Եւ ի՞ գիտացից զայդ. զի ես՝ ծե՛ր եմ, եւ կի՛ն իմ անցեալ զաւուրքք իւրովք» (Ղկ Ա 18): Այս հարցը ժամանակին Աստծուն տվեց նաեւ Աբրամը[67], երբ Աստված նրան անասելի մեծ ժառանգություն խոստացավ (Ծն ԺԵ 7-8): Նման՝ կասկածով լի հարցադրում, առաջ քաշեց նաեւ նրա կին Սառան, երբ դռան ետեւից գաղտնի լսեց հրեշտակի խոսքը, թե զավակ պիտի ունենա (Ծն ԺԸ 10-13)[68]:

Զաքարիային իպատասխան՝ հրեշտակը հայտնում է, որ ինքը Գաբրիել հրեշտակապետն է, նա, ով կանգնում է Աստծո առջեւ, նա, ով երեւացել է Սամփսոնի մորը (Դատ. ԺԳ 6) եւ ավետել Սամփսոնի ծնունդը, նա, ով հայտնվել է Դանիելին եւ ավետել Փրկչի գալուստը[69] (Դան. Ը 15-18, Թ 21-27), «տե՛ս զԻսահակ, որ աւետեաց որդի եղեւ Աբրահամու, որ ինքն ծեր էր եւ կինն ամուլ: Տե՛ս զՍամուել, զի մայր նորա ամուլ էր: Տե՛ս զկոյսն Մարիամ, զի դու սնուցեր ի տաճարիս[70], զի մայր նորա ամուլ էր, եւ Աստուած նմա զաւակ եւ: Ես եմ Գաբրիել՝

63 «Հակոբոս Տեառնեղբոր վկայաբանության» մեջ նաեւ գոյություն ունի անուղղակի ակնարկ, որ Մկրտիչը «գինի եւ իւղ ոչ էարբ» (Թանգարան Հայկական Հին եւ Նոր դպրութեանց, Գ, Անկանոն գիրք առաքելականք, Վենետիկ, 1904, էջ 449):

64 "Толковая Библия", стр. 756-757: "Жизнь Иисуса", стр. 421: **Քիներ**, էջ 209:

65 Նույնը:

66 Եղիայի եւ Հովհաննես Մկրտչի զուգահեռմանը կանդրադառնանք ավելի ուշ:

67 Այստեղ աստվածաշնչյան նահապետին «Աբրամ» ենք անվանում, քանի որ Աստծուց դեռեւս նա «Աբրահամ» անունը չէր ստացել (տե՛ս Ծնն. ԺԷ 5):

68 **Քիներ**, էջ 209: "New Bible Commentary", p. 981.

69 "Четвероевангелие", стр. 47.

70 Ըստ ավանդության՝ Զաքարիա քահանան (քահանայապետ՝ ըստ ավանդության) եղել է Մարիամ Կույսի դաստիարակը տաճարին ընծայելուց հետո (տե՛ս օրինակ՝ "Апокрифы древних христиан", стр. 120).

միջնորդ ասացելոյս»[71]: Եվ այժմ, ինքը՝ Գաբրիելը, ուղարկվել է Զաքարիային ավետելու, բայց տեսնելով Ասպծո քահանայի թերահավատությունը՝ պատժում է նրան համրությամբ[72] «մինչեւ ցօրն՝ յորում այդ լինիցի» (Ղուկ. Ա 19-20): Հետաքրքրական է, որ ի տարբերություն Աբրահամի եւ Սառայի, ովքեր թերահավատության համար անպատիժ մնացին, Զաքարիան պատժվում է: Բանն այն է, որ Զաքարիան՝ որպես քահանա, իրավունք չուներ կասկածելու հրեշտակի խոսքերին, մանավանդ որ մինչ այդ պատահած նման դեպքեր, ինչպես ասենք Աբրահամի, Սառայի կամ Աննայի պարագայում էր, պիտի արդեն իսկ ծանոթ լինեին նրան եւ առիթ չտային կասկածի ու դրա արդյունքում՝ նշանի հայցման[73]:

«Եւ ժողովուրդն՝ ակն ունէր Զաքարիայ, եւ զարմանային ընդ յամելն նորա 'ի տաճարին, եւ իբրեւ ել՝ ո՛չ կարէր խօսել ընդ նոսա. եւ իմացան՝ եթէ տեսի՛լ եւրես 'ի տաճարին. եւ նա՝ նշանացի՛ խօսէր ընդ նոսա, եւ կայր պապանձեա՛լ» (Ղուկ. Ա 21-22): Առհասարակ, խնկարկությունը քիչ ժամանակ էր պահանջում եւ Զաքարիայի հապաղումն անհանգստություն էր առաջացնում դրսում սպասող աղոթող ժողովրդի մոտ, որովհետեւ հավանական էր, որ Ասպված մահվան մատներ քահանային, որը կհանդգներ Սրբարանում որեւէ անթույլատրելի քայլ կատարել (հմմտ. Ղեւտ. Ժ 1-2)[74]: Անհանգստության առիթ կարող էր լինել նաեւ այն, որ եթե քահանային որեւէ բան պատահած լիներ, կձախողվեր ծիսական զոհաբերությունը[75], եւ ժողովուրդը կզրկվեր քահանայի օրհնությունից, որ բաշխվում էր երեկոյան զոհից հետո[76]: Իսկ երբ Զաքարիան դուրս եկավ, ժողովուրդը նրա համրությունից եւ նշանացի բացատրություններից հասկացավ, որ ծեր քահանան տեսիլք է տեսել:

Այնուհետեւ ավետարանիչը մի շատ կարեւոր հանգամանք է մեջբերում. «Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, գնա՛ց 'ի տուն իւր» (Ղուկ. Ա 23): Այս մեջբերման շնորհիվ է, որ հնարավոր է դառնում ճշտել Եղիսաբեթի հղության եւ, հետեւաբար, Հովհաննես Մկրտչի ծննդյան օրը: Նախ անհրաժեշտ է պարզել, թե ե՞րբ տեղի ունեցավ Գաբրիելի հայտնվելը, ավետումը եւ Զաքարիայի պապանձումը: Երբ հրեշտակը հայտնվեց, Զաքարիան ծառայության մեջ էր, եւ դա Քավության տոնի առաջին օրն էր՝ «'Ի տասներորդում աւուր՝ ամսոյն եւոթներորդի» (Ղեւտ. ԻԳ 27 , Թվ. ԻԹ 7), որ հրեական թշրին ամսի 10-ն էր եւ համապատասխանում էր հռոմեական օրացույցի սեպտեմբերի 27-ին[77]: Առհասարակ, քահանայի ծառայությունը տեւում էր 12 օր՝ 5 օր Քավության տոնը եւ 7 օր Տաղավարահարաց տոնը, որոնց ընթացքում քահանան պետք է մնար տաճարում[78]: Քահանային եւ ժողովրդին պատվիրվում էր այդ ընթացքում սրբության մեջ մնալ, աշխարհիկ հոգսերը թողնել մի

71 Զմեռան հատոր, էջ 94:

72 Ըստ երեւույթին, Զաքարիան համրության հետ «վաստակում» է նաեւ խլություն, քանզի հետագա հատվածներում նրա հետ հաղորդակցվում են «նշանացի» (Ղկ Ա 62), տե՛ս "Четвероевангелие", стр. 47. "Толковая Библия", стр. 768).

73 "Толковая Библия", стр. 758. "Жизнь Иисуса", стр. 421.

74 "Толковая Библия", стр. 758.

75 **Քիներ**, էջ 210:

76 **Barclay**. The Gospel of Luke, p. 10-11.

77 **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, Երեւան, 1974, էջ 156-157 (այսուհետեւ՝ **Անանիա Շիրակացի**): **Պրոֆ. դ-ր Ա.Գ. Աբրահամյան**, Անանիա Շիրակացու Մատենագրությունը, Երեւան, 1944, էջ 289 (այսուհետեւ՝ **Աբրահամյան**, Շիրակացու Մատենագրությունը): Տերունական տոներ, էջ 54:

78 Յայսմաւուրք 1706, էջ 149-150: Թ-շրին ամսվա տոների մանրամասների համար տե՛ս Scott-Martin Kosofsky, *The Book of Customs, A Complete Handbook for the Jewish Year*, Harper-Collins e-Books 2004, pp. 221-292.

կողմ եւ նվիրվել Աստծուն. հակառակ դեպքում օրինազանցները կվերանային ժողովրդի միջից (հմմտ. Ղեւտ. ԻԳ 28-30, 35-36): Արդ, Զաքարիան, որպես քահանա[79] եւ որպես աստվածավախ մարդ, չէր կարող տոնակատարությունների օրերին գնալ եւ մերձենալ իր կնոջը, «ինչպես ենթադրում են հույները»[80], եւ չէր էլ կարող Քավության տոնի ավարտին, որ թշրին 15-ին (հոկտեմբեր 2)[81] է, մեկնել տուն, քանի որ առջեւում դեռ Տաղավարահարացի 7 օրերն էին, հետեւաբար, միայն Տաղավարահարացի ավարտից հետո, որ թշրինի 22-ն[82] էր (հոկտեմբերի 9), Զաքարիան կարող էր մեկնել տուն եւ մերձենալ Եղիսաբեթին[83] (շատ հավանական է, որ մերձեցումը տեղի ունեցած լինի անգամ մեկ օր հետո՝հոկտեմբերի 10-ին[84]): Այս ամենի ամենավառ ապացույցն է Ղուկասի խոսքը, որ Զաքարիան միայն պաշտամունքի օրերը լրանալուց հետո գնաց տուն, եւ միայն դրանից հետո Եղիսաբեթը հղիացավ (Ղուկ. Ա 23-24): Այսպես՝ հոկտեմբերի 10-ից հաշվելով անդրանկածնության ժամանակային փուլը՝ 275 կամ 276 օր (9 ամիս եւ 5 օր)[85], Հովհաննեսի ծնունդն ընկնում է հուլիս ամսվա առաջին կեսին՝(ըստ մեր հաշվարկի հուլիսի 12-14 - *Ա.Ս.*):

Թեեւ Սուրբ Գիրքը չի անդրադառնում, թե որտե՞ղ էր գտնվում Զաքարիայի տունը, սակայն ակնարկը դրա տեղանքի մասին՝«'ի լեռնակողմ ... 'ի քաղաքն Յուդայ» (Ղուկ. Ա 39), որոշ ենթադրությունների առիթ է տալիս: «Լեռնակողմ» (արեւելահայերենում՝ «Լեռնային շրջան») հրեաներն անվանում էին Հուդան, որ բաղկացած էր լեռնաշղթայից. այստեղ՝ Հուդայի ցեղին պատկանող մի որեւէ քաղաքում էր Զաքարիայի տունը[86]: Ենթադրության հիման վրա այդ վայրը Քեբրոնն է, որ հատկացվել էր Ահարոնի ցեղի քահանաներին (Հս. ԻԱ 11)[87]: Այն նահապետական քաղաք էր՝տեղակայված Հուդայի անապատին շատ մոտ[88]: Մեկ այլ քահանայական քաղաք էր Քեբրոնին մոտ[89] գտնվող Հեբրան (Հս. ԻԱ 16)[90],

79 Ըստ «Հակոբոսի նախասավետարանի»՝ քանի դեռ Զաքարիան համր էր, նրան փոխարինում էր ոմն Սամուել (տե՛ս "Апокрифы древних христиан", стр. 121):

80 **Անանիա Շիրակացի**, էջ 155, 156-157: Տերունական տոներ, էջ 54-55 (ի դեպ, հետաքրքրական է, որ 1877թ. Պետերբուրգում տպագրված «**Անանիայի Շիրակունւոյ** Մնացորդք Բանից»-ում (Ս. Պետերբուրգ, 1877, էջ 12) գրված է «... ի տասն թշրին ամսոյ մերձաւորութիւն Զաքարիայի, եւ յոլովիւն Եղիսաբեթի...», ինչը չի համապատասխանում Շիրակացու «Հայտնության ճառում» առկա հաշվարկին, եւ կարծում ենք՝ օգտագործուած է: Իսկ Անկանոն գիրք Նոր Կտակարանացում (էջ 22) հավանաբար սխալ տպագրության (կամ հաշվարկի) արդյունքում Եղիսաբեթի հղությունը տեղի է ունենում «ի թշրին քսան, ի հոկտեմբերի ինն»):

81 «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», էջ 9: Տերունական տոներ, էջ 55:

82 **Անանիա Շիրակացի**, էջ 157-ում թշրին 22-ի փոխարեն տպագրված է թշրին 29, որը, անշուշտ վրիպակ է. հաշվարկը ճշգրիտ տրված է **Աբրահամյան**, Շիրակացու Մատենագրությունում, էջ 289:

83 **Անանիա Շիրակացի**, էջ 157: Աբրահամյան Շիրակացու Մատենագրություն, էջ 289: Տերունական տոներ, էջ 55: Առավել մանրամասն տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր», Երուսաղեմ, 1998, էջ 652: **Սարգիս Կունդ**, Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 34-36: "Թուղթ ընդհանրական, Արարեալ երիցս երանեալ Սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ", Ս. Էջմիածին, 1865, էջ 184-185:

84 «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», էջ 9:

85 «Անկանոն գիրք Նոր Կտակարանացում» (էջ 9) Մկրտչի ծնունդը հաշված է թամուզ ամսվա 16-ին, որը թյուրիմացաբար անվանված է «յունիսի հինգ», սակայն թամուզ (հունիսի 20 - հուլիսի 19) 16-ը համապատասխանում է հուլիսի 5-ին:

86 "Толковая Библия", стр. 763.

87 Համապատում, էջ 24:

88 "Жизнь Иисуса", стр. 799.

89 Ըստ ավանդության՝ Քեբրոնից 5 մղոն հարավ եւ Երուսաղեմից 4 մղոն արեւմուտք (Բառարան Սուրբ Գրոց, Մոսկվա-Երեւան, 1992, էջ 390 (այսուհետե՝Բառարան Սուրբ Գրոց)):

90 Համապատում, էջ 60: "Четвероевангелие", стр. 49. "Жизнь Иисуса", стр. 799.

որը ըստ Մաղաքիա արքեպ. Օրմանյանի՝ այլ թարգմանություններում Հուդդա է գրվել եւ շփոթմամբ դարձել է Հուդա[91]: Շնորհք արք. Գալստյանը, որպես Զաքարիայի բնակության վայր նշում է ըստ ավանդության փոխանցված Այն Քերիմ գյուղը, որ Երուսաղեմից շատ հեռու չէ եւ որտեղ մինչեւ այսօր ցույց է տրվում Զաքարիայի՝ եկեղեցու վերածված տունը[92]:

Այսպիսով՝ Զաքարիայի տուն գնալուց հետո Եղիսաբեթը հղիացավ, բայց 5 ամիս շարունակ թաքցնում էր այդ՝ հավանաբար վախենալով, որ իրեն չեն հավատա եւ ծաղրի առարկա կդարձնեն[93], բայց միեւնույն ժամանակ օրհնում էր Աստծուն՝ իր նախատինքը մարդկանց միջից վերացնելու համար (Ղուկ. Ա 24-25): Սա նմանվում է Սառայի եւ Աննայի փառաբանություններին (Ծնն. ԻԱ 6-7, Ա Թագ. 1-11) եւ հարում է Ռաքելի՝ Հակոբ նահապետի կնոջ բացականչությանը. «եհան յինէն Աստուած զնախատինս իմ» (Ծնն. Լ 23)[94]:

Այս ամենից մեկ ամիս հետո, երբ Եղիսաբեթը գտնվում էր իր հղիության վեցերորդ ամսում (Ղկ Ա 36), Գաբրիել հրեշտակապետը երեւում է Մարիամ Կույսին եւ ավետում է Հիսուսի մոտալուտ ծնունդը (Ղկ Ա 26-38), որից հետո Մարիամը շտապում է Եղիսաբեթի մոտ (Ղկ Ա 39-40): Քրիստոսի մանկությանը նվիրված պարականոնում այս կապակցությամբ գրված է. «Արդ, յաւուր միում զմտաւ ածեալ սրբոյ կուսին Մարիամու՝ ասէ. «Ցարուցեալ գնացից յազգական իմ՝ առ Եղիսաբեթ, եւ պատմեցից նմա զամենայն գործս զայս, որ եղեւ ընդ իս, եւ զոր ինչ ասիցէ ցիս, զայն արարից»: Ապա ելնելով՝ Մարիամն առավոտյան ծածուկ մեկնում է Զաքարիայի տուն եւ ողջույն է տալիս Եղիսաբեթին[95]: Երբ Եղիսաբեթը լսում է Մարիամի ողջույնը, մանուկը ցնծալով խաղում է նրա որովայնում՝ Սուրբ Հոգու ազդեցությամբ զգալով ներկայությունը մարդկության Փրկչի, Ում գալուստին ինքը պիտի պատրաստի մարդկությանը[96] (Ղուկ. Ա 41): Մանկան խաղն իր մոտավոր օրինակն է գտնում Ծնն. ԻԵ 22-ում, որտեղ մոր որովայնում իրար էին բախվում Ռեբեկայի երկվորյակ որդիները[97]: Սուրբ Հոգով լցվելով՝ Եղիսաբեթը բարձր ձայնով աղաղակում է. «Օրհնեա՛լ ես դու 'ի կանայս, եւ օրհնեա՛լ է պտուղ որովայնի քոյ» (Ղուկ. Ա 42): Այնուհետեւ Ղուկասը շարունակում է Եղիսաբեթի խոսքերը, որոնք փոքրիկ փոփոխություններով առկա են նաեւ պարականոն գրականության որոշ նմուշներում[98]. «Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս: Զի ահաւասիկ՝ իբրեւ եղեւ ձա՛յն ողջունի քոյ յականջս իմ, խաղա՛ց ցնծալով մանուկս յորովայնի իմում («Հակոբոսի նախաավետարանում» հավելված է նաեւ «եւ օրհնեց քեզ»[99] - *Ա.Ս.*): Եւ երանի՛ որ հաւատացէ՝ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա 'ի Տեառնէ» (Ղուկ. Ա 43-45):

Այս ամենին հաջորդում է Մարիամի օրհներգությունը (Ղուկ. Ա 46-55), որից հետո Ղուկաս ավետարանիչը գրում է.

---

91 Համապատում, էջ 60, հմմտ. "Иисус и Евангелия", стр. 264.
92 **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան**, Աստուածաշնչական Սուրբեր, Երեւան, 1997, էջ 161:
93 "Четвероевангелие", стр. 47.
94 **Քիներ**, էջ 210:
95 «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», էջ 22-23:
96 "Четвероевангелие", стр. 49. "Жизнь Иисуса", стр. 423.
97 "Жизнь Иисуса", стр. 423.
98 Տե՛ս օրինակ՝ «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», էջ 23: "Апокрифы древних христиан", стр. 121.
99 "Апокрифы древних христиан", стр. 121.

«Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ դարձաւ 'ի տուն իւր» (Ղկ Ա 56), իսկ Հայսմավուրքում տրված է անգամ դրա պատճառը. «Եւ իբրեւ կատարեցաւ ինն ամիս եւ ե օր յղութեան մօրն Յովհաննու՝Եղիսաբեթի, անկաւ Եղիսաբեթ առ ոտն Մարիամու՝մօրն Յիսուսի եւ աղաչէր ասելով. «Եկիր ողջունիւ, մա՛յր Թագաւորին երկնից: Արի՛, երթ խաղաղութեամբ ի տեղի քո, տաճա՛ռդ Աստուծոյ Բանին: Զի ահա հասեալ է ժամ ծնանել ինձ զմանուկս իմ: Չէ պարտ ծառայիս բազմել եւ առաջի կալ Սմա Թագաւորի եւ թագուհոյ: Անպատեհ է հողույս ի բազմականի հանգչել, աստուածային Հրոյդ ի յոտին կալ եւ սպասաւորել: Անպատշաճ է ինձ ընկողմանիլ, եւ քեզ ի յոտին կալ եւ պաշտել: Ա՛ռ եւ գնայ զԴայ, որ զբոցեղենսն... »: Եւ յարուցեալ Մարիամ դարձաւ ի տուն իւր՝'ի Նազարեթ»[100]:

Ընդհանրապես Պաղեստինում ընտանեկան տոների ժամանակ հարեւաններն[101] անպայման հավաքվում էին (հմմտ. Ղկ ԺԵ 6): Սակայն ծնունդը (հատկապես արու զավակի, քանի որ նա ընտանեկան շառավիղի շարունակողն էր) շատ ավելի մեծ առիթ էր համարվում: Ծննդաբերության ժամանակը լրանալու օրերին ընտանիքի շուրջն էին հավաքվում ընտանիքի մերձավորներն ու տեղական երաժիշտները: Այս վերջիններն սպասում էին մինչեւ ծննդյան պահը, եւ երբ հայտարարվում էր, որ ծնվածը տղա է, երաժիշտներն սկսում էին ուրախ ու բարձր նվագել (աղջկա ծնվելու դեպքում լուռ հեռանում էին)[102]: Ցնծությունն ու ուրախությունը ձգվում էին մինչեւ 8-րդ օրը, երբ կատարվում էր Աստծո՝ Աբրահամի հետ կնքած թլփատության ուխտը (Ծն ԺԷ 10-14, Ղեւ ԺԲ 3), որով նորածինը ժառանգն էր դառնում ընտրյալ ժողովրդի: Թլփատությանը զուգահեռ կատարվում էր նաեւ անվանակոչության արարողությունը[103]: Ղուկասն էլ նշում է (Ղկ Ա 59-63), որ Հովհաննեսի ծննդյան 8-րդ օրը հավաքվում են թլփատելու մանուկին եւ որպես անուն ցանկանում են տալ նրան իր հոր՝Զաքարիայի անունը՝հավանաբար հետեւելով տարածված սովորությանը, ըստ որի նորածնին անվանում էին հոր կամ որեւէ տարեց ազգականի անվամբ (առհասարակ, հրեաների մոտ անունները որեւէ նշանակություն էին ունենում՝ հիմնականում ցույց տալու ծնունդի հետ կապված որեւէ հանգամանք (հմմտ. Ծնն. ԻԵ 25, Լ գլուխ))[104]: Սակայն մայրը՝ Եղիսաբեթը, Սուրբ Հոգու հրաշալի ներշնչմամբ[105] (ըստ որոշ կարծիքների էլ Զաքարիան էր հայտնել Եղիսաբեթին հրեշտակի հայտնությունը[106]) առարկում է. «Ո՛չ, այլ կոչեսցի Յովհաննէս» (Ղուկ. Ա 60): Սա, բնականաբար, զարմանք է առաջացնում հավաքվածների մոտ, քանի որ ազգատոհմում չկար մեկը, ում անունը Հովհաննես լիներ: Հարցը լուծելու համար նշանացի դիմում են համրացած Զաքարիային, ով գրելու համար նախատեսված մեղրամոմապատ տախտակ է պահանջում, որի վրա գրում է. «Յովհաննէս է անուն դորա»

100 Ցայսմաւուրք 1706, էջ 416:

101 Ղկ Ա 58-ում առկա «շուրջ զնովաւ էին» արտահայտության (տե՛ս Զոհրապեան Աստուածաշունչ, Աստուածաշունչ Մատեան (արեւելահայերեն)) փոխարեն մի շարք թարգմանություններում (տե՛ս «Արարատ» տպագրություն, "NIV Bible", ) առկա է «հարեւաններ», «դրկիցներ» բառը, որը, ինչպես եւ «շուրջը գտնուողներ»-ը, հունարեն տարբերակում (տե՛ս Новый Завет на Греческом) տրված «περίοικος» (perioykos) բառի թարգմանությունն են (տե՛ս **А. Д. Вейсман**. Греческо-русский словарь, Москва, 1991, стр. 984-985 (այսուհետեւ՝ Греческо-русский словарь):

102 **Barclay**. The Gospel of Luke, p. 17. **Քիներ**, էջ 212:

103 Սա, թերեւս, պարտադիր պայման չէր 8-րդ օրվա համար (The Oxford Bible Commentary, p. 928).

104 **Barclay**. The Gospel of Luke, p.17. "Четвероевангелие", стр. 50. "Толковая Библия", стр. 768 .

105 "Толковая Библия", стр. 768. "Четвероевангелие", стр. 10.

106 Տե՛ս "New Bible Commentary", p. 983. «Համապատում», էջ 30:

(Ղկ Ա 63)՝ հաստատելով հրեշտակի աստվածային ավետիսը (Ղկ Ա 13): Հովհաննես անունը (հուն.՝ Ἰωάννης (Ioannes), եբր.՝ יוחנן (Yəhoxānān կամ johōhānān[107])), սկզբնական է որպես Տիրոջ (Եհովայի) շնորհ կամ գթություն, աստվածաշնորհ (ձեւավորվել է եբր.՝ יהוה (Yehovā կամ Yahvē)՝ Աստված, Տեր, եւ חנה (xanā)՝ շնորհ, գթություն բառերից)[108]: Որոշ աղբյուրներում հանդիպել ենք նաեւ Հովհաննես անվան՝ «Եհովան ողորմած է» թարգմանության տարբերակին[109]:

Այս իրադարձությունը եւ մանավանդ դրանից անմիջապես հետո Զաքարիայի լեզվի բացվելը (ինչպես Գաբրիելն էր ասել (Ղուկ. Ա 20) եւ Աստծուն օրհնելը[110] զարմացրեցին բոլորին եւ ահ գցեցին բոլորի մեջ, «եւ եղեւ ահ՝ ի վերայ ամենեցուն որ լսէին զայս, եւ որ շուրջ բնակեալն էին զնոքօք. եւ ընդ ամենայն լեռնակողմն Հրէաստանի, պատմէին ամենայն բանքս այսոքիկ: Եւ եդին ամենեքեան որ լսէին՝ ’ի սիրտս իւրեանց՝ եւ ասեն. Զի՞նչ լինիցի մանուկս այս» (Ղուկ. Ա 64-66): Ղուկասն ավելացնում է. «Եւ ձե՛ռն Տեառն էր ընդ նմա» (Ղուկ. Ա 66), ինչին հաջորդում է Զաքարիայի մարգարեացումը Սուրբ Հոգու ազդեցությամբ (Ղուկ. Ա 67-79): Այս օրհնությունը, որ հիշեցնում է հինկտակարանյան մարգարեական պոեմները, իր բովանդակությամբ բաժանվում է 3 մասի՝

**ա.** Ղուկ. Ա 76-77, որտեղ Զաքարիան օրհնում է Աստծուն՝ Մեսիային վերջապես ուղարկելու համար:

**բ.** Ղուկ. Ա 78-79, որտեղ Զաքարիան մարգարեանում է իր զավակի՝ Հովհաննեսի ապագայի մասին:

**գ.** Ղուկ. Ա 78-79, որտեղ Զաքարիան խոսում է Աստծո՝ մարդկանց բաշխելիք բարիքների մասին[111]:

Մեր ուսումնասիրելիք թեմային առնչվող երկրորդ հատվածում գրված է. «Եւ դո՛ւ մանուկ՝ մարգարէ՛ Բարձրելոյ կոչեսջի՛ր. զի երթիցե՛ս առաջի երեսաց Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա: Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա, ’ի թողութիւն մեղաց նոցա» (Ղուկ. Ա 76-77): Սրանով, ինչպես հետագայում կհամոզվենք, Զաքարիան գծագրում է Հովհաննեսի գալիք ընթացքը՝ միեւնույն ժամանակ այդ հաստատելով Հին Կտակարանի մարգարեություններով: Այսպես, Հովհաննեսը պիտի լինի Բարձրյալի մարգարեն եւ պատրաստի Տիրոջ ճանապարհը, ինչպես մարգարեացել էին Եսայի եւ Մաղաքիա մարգարեները (Ես. Խ 3, Մաղ. Գ 1)՝ վկայելու եւ ծանոթացնելու մարդկությանը Տիրոջը՝ տալով փրկության գիտությունը, որպեսզի Տիրոջով ներվեն նրանց անիրավություններն ու մեղքերը (Երեմ. ԼԱ 34):

Ավարտելով Զաքարիայի օրհներգի շարադրումը՝ Ղուկասը մեկ նախադասությամբ ծանուցում է Հովհաննես Մկրտչի կյանքի ամենամշուշոտ շրջանի մասին. «Եւ մանուկն

107 Տե՛ս “Мифы народов мира”. Энциклопедия, т. 1, Москва,1986, стр.551 (այսուհետեւ՝ “Мифы народов мира” 1).

108 **Դրաչյա Ամատյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւան, 1946, էջ 537: “Толковая Библия”, стр. 768. **Barclay**. The Gospel of Luke, p. 17. **Եղիայեան** էջ 920:

109 “New Bible Commentary”, p. 981. “Мифы народов мира”, стр. 551. “Мифологический словарь”, Москва, 1991, стр. 250 (այսուհետեւ՝ “Мифологический словарь).

110 Փակված շուրթերի՝ համբությունից բացվելու, օրհնելու ու մարգարեանալու հինկտակարանյան օրինակ է Եզեկիել մարգարեի հետ կապարված դեպքը Եզեկ. ԼԳ 22-ում եւ ԻԴ 27-ում (**Քիներ**, էջ 213):

111 “Толковая Библия”, стр. 770.

աճէր եւ զօրանա՛յր հոգով. եւ էր յանապա՛տս մինչեւ յօր երեւելոյ նորա Իսրայէլի» (Ղուկ. Ա 80): Ըստ ավանդության՝ երբ Հիսուսի ծնունդից հետո մոգերը գալիս են Երուսաղեմ եւ Հերովդես Մեծից հարցնում են հրեաների արքայի տեղը (Մատթ. Բ 1-2), Վերջինս, հիշելով Զաքարիայի որդու մասին, ում հրաշալի ծնունդն այդքան մեծ աղմուկ էր բարձրացրել (Ղուկ. Ա 65), Բեթղեհեմից բացի դահիճներ է ուղարկում նաեւ Հեփտա: Զաքարիան այդ ժամանակ տաճարում իր քահանայական ծառայությունն էր մատուցում, իսկ Եղիսաբեթը, լսելով, որ Հերովդեսը հետապնդում է մանուկ Հովհաննեսին, փախչում է անապատ եւ սկսում է ապահով տեղ փնտրել որդուն թաքցնելու համար, սակայն չի կարողանում գտնել[112]: Այդ ժամանակ հուսահատված նա աղաղակում է.

«Տէ՛ր Աստուած հարցն մերոց, Աստուա՛ծ Իսրայելի, լո՛ւր աղաչանաց ծառայի քո եւ արա՛ առ իս զգութ մարդասիրութեան քո եւ փրկեա զանձն իմ ի ձեռաց Հերովդէի եւ յանօրէն շան կատաղելոյ զօրաց նորա: Բացցի երկիր եւ կլցէ զմայրն հանդերձ մանկամբն իւրով, եւ մի՛ հայեսցին աչք իմ տեսանել զմահ որդւոյ իմոյ»:

Աղոթքի հետ լեռը բացվում է եւ ներս է թողնում նրանց: Եվ լույս է շողում նրանց համար, ու մի լուսեղեն ամպ է հովանի լինում: Իսկ Տիրոջ հրեշտակը նրանց հետ մնալով՝ պաշտպանում է մորն ու մանկանը: Այդ ընթացքում Հերովդեսը, փնտրելով եւ չգտնելով մանկանը, զինվորներ է ուղարկում Զաքարիայի մոտ եւ հարցնում է որդու թաքստոցի մասին: Զաքարիան պատասխանում է, որ ինքը, Աստծո ծառան լինելով, տաճարում է գտնվում եւ չգիտի որդու տեղը, քանի որ տանը չի եղել: Ծառաներից լսելով այս՝ Հերովդեսը զայրանում է եւ մի քանի անգամ նորից զինվորներ է ուղարկում՝ ի վերջո սպառնալի ասելով. «Ճի՛շտն ասա, ո՞ւր է քո որդին. իմացի՛ր, որ քո կյանքն իմ իշխանության ներքո է»: Զաքարիան պատասխանում է.

«Գիտեմ, որ խնդիր ես դու արեան իմոյ եւ կամիս հեղուլ զարիւնն իմ ի տարապարտուց[113], այլ թէպէտ եւ զմարմինն իմ դառն մահուամբ կորուսանես, բայց զհոգիս իմ Տէր ընկալցի, այն որ արար եւ ստեղծ զիս»[114]: Եվ Զաքարիան[115] սպանվում է՝ ընկնելով տաճարի եւ զոհասեղանի միջեւ, ինչպես ակնարկում է նաեւ Հիսուս. «արի՛ւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝ զոր սպանէք ընդ մէջ տաճարին եւ սեղանոյ» (Մատթ. ԻԳ 35)[116]: Իսկ Եղիսաբեթն անապատում մնում է հինգ ամիս[117], որից հետո, մանկանը հանձնելով հրեշտակի խնամքին (ըստ Մ. վրդ. Ավգերյանի՝ Հովհաննեսը սնվեց հովիվների մոտ[118], բայց եւ նախապես հանձնվել էր հրեշտակի խնամքին[119]), գնում է ամուսնու մահը ողբալու եւ այլեւս Հովհաննեսին չի

112 “Четвероевангелие”, стр. 51. Յայսմաւուրք 1706, էջ 416: Յայսմաւուրք 1834, էջ 116 (բ):

113 Ըստ ավանդության՝ Զաքարիան կանխապես արժանացել էր Հերովդեսի թշնամանքին, որովհետեւ Սրբություն Սրբոց մտնելու համար հրաժարվել էր կաշառք մուծել, ինչպես Հերովդեսն էր պահանջում (տե՛ս «Տերունական տոներ», էջ 349-350):

114 “Апокрифы древних христиан”, стр. 126. Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 57-59:

115 Այս անվան հետ կապված՝ փիրապետող է այն կարծիքը (տե՛ս “Толковая Библия”, стр. 466), որ այս Զաքարիան Հովհաննես Մկրտչի հայրը չէ, այլ Բ Մնաց. ԻԴ 20-ի Զաքարիան (տե՛ս «Արարատ» պատգրություն, “NIV Bible”, “Библия”), որ Զոհրապեան Աստուածաշնչում եւ Աստուածաշունչ Մատթեան (արեւելահայերեն)-ում Յոթանասնից թարգմանության հետեւողությամբ (տե՛ս LXX) անվանված է «Ազարիաս»:

116 Տերունական տոներ, էջ 350: “Четвероевангелие”, стр. 51.

117 “Мифы народов мира”, стр. 552: “Мифологический словарь”, стр. 250.

118 **Ավգերեան,** Գ, էջ 375:

119 **Ավգերեան,** Ա, էջ 19:

տեսնում[120]. հավանաբար նա քիչ ժամանակ անց մահանում է[121], եւ Հովհաննեսն իր կյանքի մեծ մասն անցկացնում է անապատում[122]: Այդ անապատը Հուդայում էր՝ Մեռյալ ծովի եւ Երուսաղեմի միջեւ եւ կոչվում էր Հուդայի անապատ[123] (հմմտ. Մատթ. Գ 1): Թե ինչո՞վ էր 30 տարի շարունակ Հովհաննեսն անապատում զբաղվում, կարելի է միայն ենթադրել: Ի թիվս մի շարք այլ ենթադրությունների[124]՝ առավել հավանական են համարվում երկուսը՝ Հովհաննես Մկրտիչը մինչեւ իր կոչումն Աստծուց՝

**ա.** նազովրեական ուխտ էր արել,
**բ.** եղել էր եսենների աղանդի անդամ կամ հետեւորդ:

**ա.** Չնայած այս կարծիքը երկրորդի համեմատ գրեթե չի քննարկվում գիտական աշխարհում, այնուամենայնիվ, որոշ հեղինակներ փոքրիկ ակնարկներ անում են Մկրտչի՝ նազովրեական լինելու մասին[125]: Ընդհանրապես նազովրեական ուխտի մասին շատ քիչ տեղեկություններ են հայտնի: Նազովրեական կոչվում էին մարդիկ (տղամարդ թե կին), ովքեր իրենց անձը որոշ ժամանակով նվիրում էին Աստծուն եւ հստակ ժամանակաշրջանի համար պահեցողություն էին ուխտում: Նրանց մասին ցուցումները գրված են Թվոց Զ գլխում: Այսպես, նազովրեականները պարտադիր պետք է հրաժարվեին գինուց եւ այն ամենից, ինչ ստացվում է որթատունկից, ոգելից խմիչքներից եւ որպես ուխտի ու հոգեկիր զորության նշան՝ պետք է հերապահությամբ սրբագործվեին, ջմոտենային մարդկային դիակի՝ անմաքուր չհամարվելու համար եւ, առհասարակ, պիտի սուրբ լինեին ողջ կյանքի ընթացքում (Թվ. Զ 2-8): Վաղ շրջանում նազովրեականներին սուրբ էին համարում եւ կարծիք կար, որ նրանք Աստծո Հոգու կրողներն էին, ինչն արտահայտվում էր որեւէ հոգեկան կամ ֆիզիկական որակով: Սակայն ժամանակի հետ նման պատկերացումը թուլացավ, եւ նազովրեականն սկսեց դիտվել իբրեւ հասարակ մեկը, ով Աստծուն նվիրվելու ուխտ էր անում[126]: Հին Կտակարանում դեպքեր կան, երբ մանուկը դեռ չծնված արդեն Տիրոջ ուխտյալ է համարվում (Սամփսոնը՝ Դատ. ԺԳ 5, 14 համարներում) կամ այդպիսին է ճանաչվում սեփական ծնողի կողմից (Սամուելը Ա Թագ. 11 համարում)[127]:

Հովհաննես Մկրտիչն էլ, դեռեւս չծնված, արդեն լցված էր Սուրբ Հոգով, եւ նրան էլ, ինչպես նազովրեականներին, վիճակված էր ողջ կյանքում գինի եւ օղի չխմել (Ղուկ.

120 Յայսմաւուրք 1706, էջ 416:

121 Համապատում, էջ 57: "Иисус и Евангелия", стр. 552.

122 Ջոհրապեան Աստուածաշնչում «անապատ» բառի փոխարեն Աստուածաշունչ Մատեան (արեւելահայերեն)-ում՝ Ղկ Ա 80, գրված է «ամայի տեղեր» բառակապակցությունը, որը մեկ այլ գաղբերակն է հունարեն ἐρημία (eremia), (տե՛ս "Новый Завет на Греческом") բառի թարգմանության, որ նշանակում է անապատ (տե՛ս "Греческо-русский словарь", стр. 527, հմմտ. «Արարատ» պատգրություն, "NIV Bible", "Библия"):

123 **Եղիայեան**, էջ 921: Համապատում, էջ 58: "Толковая Библия", стр. 773, "NIV Bible", էջ 1507-ի տողատակ, **William Barclay**. The Gospel of Mark, Edinburg, 1977, p. 16 (այսուհետեւ՝ **Barclay**. The Gospel of Mark).

124 Համապատում, էջ 58, **Եղիայեան**, էջ 920:

125 "Nicene and post-nicene fathers, vol. 4, **St. Jerome**, Letters and select works, Michigan, 1983, p. 190. "The Oxford Bible Commentary", p. 926. "Христианство", стр. 271. "Жизнь Иисуса", стр. 230, 799. "Иисус и Евангелия", стр. 265. **Ալեքսանդր Մեն**, Մարդու Որդին, Երեւան, 2007, էջ 56 (այսուհետեւ՝ Մարդու Որդին):

126 "Библейский словарь Брокгауза-Ефрона", Москва 1998, տե՛ս գվյալ բառահոդվածը. այսուհետեւ՝ "Библейский словарь Брокгауза").

127 "Христианство", стр. 471. Մարդու Որդին, էջ 399:

Ա 15), սակայն այս ամենին գումարած՝ նա ավելի ծանր ճգնության ձեւ էր կիրառում՝ սնվելով բացառապես վայրի մեղրով եւ մորեխներով ու իր մարմնին կրելով ուղտի մազից զգեստ եւ մեջքին՝ կաշվե գոտի (Մատթ. Գ 4, Մարկ. Ա 6), ինչը նշում է նաեւ Էբիոնիտների ավետարանը[128]: Զգեստավորման այս կերպը հատուկ էր Հին Կտակարանի ամենախիստ ճգնավորին՝ Եղիա մարգարեին (Դ Թագ. Ա 8): Ճգնության այս տարբերակի դժվարակիր լինելու մասին է վկայում Զաքարիայի մարգարեության ԺԳ գլխի 4-րդ համարը, որտեղ մազեղեն քուրձ հագնելը բնորոշվում է որպես Աստծու կողմից պատժի տարբերակ:

**բ.** Ըստ Հովսեփոս Փլաբիոսի, հրեաների մեջ գոյություն ունեին փիլիսոփայական 3 աղանդներ՝ փարիսեցիներ, սադուկեցիներ եւ եսեններ (անվանվում են նաեւ եսսենացիներ, էսսեներ, հեսեներ - *Ա.Ս.*). վերջիններն իսկապես սրբությամբ էին ապրում[129]: Սուրբ Գիրքը ոչինչ չի նշում այս համայնքի մասին, հավանաբար այն պատճառով, որ նրանք մեծ թիվ չէին կազմում եւ քաշված էին անապատ՝ վարելով խիստ բարեպաշտ կյանք, ինչպես աղանդի անունն էլ է բնորոշում[130]: Այս շարժումը գոյատեւել է Ք.ա. Բ դարից մինչեւ Ք.հ. Ա դարը[131]: Եսենների գաղութ է համարվում Մեռյալ ծովի ափին գտնվող Քումրանի համայնքը[132]: Այն, որ Հովհաննեսն անդամ է եղել այս համայնքի (սա բոլոր գիտնականները նշում են վերապահումով[133]), հուշում է Ղուկ. Ա 80-ը, որը Մկրտչի համար որպես կենսավայր նշում է անապատը՝ հատկապես Մեռյալ ծովի հյուսիս-արեւմտյան ափը, որտեղ ակտիվ է եղել Քումրանի համայնքը[134]: Այստեղ մանուկ Հովհաննեսը, բնականաբար, ինքնուրույն կյանք չէր կարող ունենալ, իսկ Քումրանի համայնքը, ըստ երեւույթին, սովորություն ուներ որբացած մանուկներ որդեգրելու (Հրեական պատերազմ, 2/8:2[135]) եւ դաստիարակելու սեփական գաղափարախոսությամբ[136]. «...իրենց շարքերն են ընդունում ուրիշ երեխաների այն տարիքում, երբ նրանք դեռեւս ունակ են սովորելու, վարվում են նրանց հետ, ինչպես իրենց սեփական երեխաների հետ եւ նրանց ներշնչում են իրենց բարքերը»[137]: Այս բարքերի թվին էին պատկանում սերը միմյանց հանդեպ, հնազանդությունը, խուսափումն զգայական հաճույքներից եւ ամուսնությունից[138]: Հավանական վարկած է համարվում այն, որ

128 "Апокрифы древних христиан", стр. 66.

129 **Иосиф Флавий**. Иудейская Война, Минск, 1999, 2/8:2, стр. 202 (այսուհետեւ՝ "Иудейская Война"). Иудейские Древности, 13/ 5:9, стр. 21. Тексты Кумрана, Выпуск 1, Перевод с еврейского и арамейского, введение и комментарий **И.Д. Амусина**, Москва, 1971, стр. 348 (այսուհետեւ՝ "Тексты Кумрана").

130 **Բարգէն վրդ. Թօփճեան**, Եսսենացիք, Մոնթրէալ, 1987, էջ 17, 25 (այսուհետեւ՝ Եսսենացիք):

131 "Христианство, стр. 271: Աստվածաշնչի հանրագիտարան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 1999, էջ 134 (այսուհետեւ՝ Աստվածաշնչի հանրագիտարան):

132 **И.Д. Амусин**. Кумранская община, Москва, 1983, стр. 203, 266 (այսուհետեւ՝ "Кумранская община").

133 "Кумранская община", стр. 211-212. "Новый библейский словарь", "Библейские персонажи", Санкт-Петербург, 1999, стр. 156 (այսուհետեւ՝ "Новый библейский словарь").

134 "Кумранская община", стр. 212. "Жизнь Иисуса", стр. 230. "Иисус и Евангелия", стр. 265.

135 "Иисус и Евангелия", стр. 265. Մարդու Որդին, էջ 57:

136 "Христианство", стр. 271.

137 "Иудейская Война", 2/8:2, стр. 202.

138 Ներքին կանոնադրության եւ ծիսական խնդիրների համար գեն Քումրանի համայնքի օգտագործած բնագրերի գիտական առաջին հրատարակությունը՝ *Discoveries in the Judaean Desert, 1, Qumran Cave 1,* ed, D. Barthelemy և J. M. Milik, Oxford 1955, pp. 107-136. հմմտ. նաեւ *The Dead Sea Scrolls Study Edition*, ed. Florentino Garcia Martinez և Eibert J. C. Tigchelaar, Brill, Leiden-New York-Köln 1999:

Հովհաննեսը «անապատի մէջ ճգնած իր օրերուն, ծանօթացած ըլլա պատժուած եսսենացի աղանդաւորի մը հետ ու անցուցած իր երիտասարդութեան տարիները, դաստիարակուելով անոր շունչին տակ (ինչպես էր նաեւ պարագան Յովսեփոս Պատմիչի[139])»[140]: Քումրանի եւ Մկրտչի միջեւ ընդհանրության մեկ այլ եզր է ճգնակեցությունը, որ ունեին թե՛ եսենները, թե՛ Հովհաննես Մկրտիչը: Ավետարանը նշում է, որ Հովհաննեսը չէր ուտում եւ չէր խմում (Մատթ. ԺԱ 18). «կերակուր նորա էր մարա՛խ եւ մե՛ղր վայրենի» (Մատթ. Գ 4, Մր Ա 6): Այսպես, առկա աղբյուրները ոչ միայն հաստատում են Քումրանում ժուժկալությունը սննդի հանդեպ[141], այլեւ բացատրություններ են տալիս, թե ինչպե՛ս պետք է սնվել մեղրով ու վայրի մորեխով (Դամասկյան փաստաթուղթ 12:13-14)[142]: Հուդայա-քրիստոնեական ավանդության մեջ մեղրը նմանեցվում է մանանային[143] (ընդ որում, ոչ թե մեղուների մեղրն է, այլ ինչ-որ ծառից ստացվող հյութ)[144]: Հովսեփոսն էլ է նշում նման հյութեղ պտուղների մասին, որոնք «մեղր են տալիս այն ասպիճան համեղ, որ գրեթե չեն զիջում իրականին»[145]: Նույն տեղում Փլաբիոսը նշում է նաեւ մեղվաբուծության մասին Քումրանի հարեւան Երիքովի շրջանում: Փիլոն Ալեքսանդրացին էլ է նշում, որ եսենները «հոգ են տանում մեղուների փեթակներին»[146]: Այդ է հաստատում նաեւ Դամասկյան փաստաթուղթը (12:12)[147]: Ըստ Հ. Մ. վրդ. Ավգերյանի՝ Մկրտիչը սնվում էր վայրի մեղրով, որ վայրի մեղուները դնում էին ժայռերի ծերպերում եւ ծառերի ճեղքերում[148]: Այս կարծիքն առնչություն ունի Բ Օր. ԼԲ 13-ի եւ Սաղմ. Ձ 17-ի հետ, իսկ այն, որ Հովհաննեսը սնվում էր մեղրով, հինկտակարանյան իր զուգահեռն է գտնում Սամփսոնի հետ (Դատ. ԺԴ 8): Մորեխների վերաբերյալ կարծիքները տարբեր են (ինչպես, ասենք, այն որ դա ոչ թե մորեխ միջատն էր, այլ Հայաստանում հայտնի մատուտակ քաղցրահյութ բույսը, որ կոչվում է նաեւ «մարախ»[149], կամ «մորեխ», կամ էլ բակլայի կամ ընկույզի ինչ-որ տեսակ է[150]): Սակայն Հերոնիմոսն «Ընդդեմ Հովհանոսի»[151] գրքում գրում է, որ անապատների եւ արեւելյան ժողովուրդների մոտ տարածված է մորեխ ուտելը: Այն ուտում էին խորովելով, մանր աղալով, չորացնելով եւ ծխեցնելով[152]: Որ մորեխները սովորական

139 Հովսեփոսը երիտասարդության տարիներին, ինչպես նշում է «Ինքնակենսագրության» մեջ, դաստիարակվել է Բանուս անվամբ մի խիստ ճգնակյացի մոտ (տե՛ս "Тексты Кумрана", стр. 348), ով հիշեցնում է Հովհաննես Մկրտչի կերպարը ("Жизнь Иисуса", стр. 230. "Иисус и Евангелия", стр. 265).

140 Եսսենացիք, էջ 43:

141 "Жизнь Иисуса", стр. 230, 880.

142 Սույն փաստաթուղթը մեր ձեռքի տակ չի եղել. քաղել ենք "Иисус и Евангелия" գրքից (էջ 265): Մորեխի պատրաստման եղանակի մասին առավել մանրամասն տե՛ս "Толковая Библия", стр. 67):

143 Էրիոնիտների պարականոն ավետարանն այս կապակցությամբ նշում է. «...նրա կերակուրն էր (ինչպես ասված է) վայրի մեղր, որի համը նման էր մանանայի եւ յուղի մեջ [եփած] մեղրե բլիթների համին» (տե՛ս "Апокрифы древних христиан", стр. 66, հմմտ. "Толковая Библия", стр. 67.

144 "Мифы народов мира", стр. 551. "Апокрифы древних христиан", стр. 71. Barclay. The Gospel of Mark, p. 16. "Толковая Библия", стр. 67.

145 "Иудейская Война" 4/ 8:3, стр. 438:

146 "Кумранская община", стр. 93:

147 Փաստաթուղթը մեր ձեռքի տակ չի եղել, օգտվել ենք "Кумранская община" աղբյուրից (էջ 101):

148 **Աւգերեան,** Ա, էջ 33, հմմտ. "Толковая Библия", стр. 67.

149 Տե՛ս **Սպ. Մալխասեանց**, «Հայերէն բացատրական բառարան», հ. 3, Երեւան, 1944, էջ 270, հմմտ. էջ 282, հմմտ. էջ 269-270:

150 **Barclay**. The Gospel of Mark, p. 16.

151 Տե՛ս Ph. Schaff (ed.), The Nicene and Post-Nicene Fathers, 2ed series, vol. 6, Albany 1997, p. 845 (Against Jovinius, Book 2):

152 **Աւգերեան,** Ա, էջ 33:

ուտելիք էին անապատաբնակների համար, նշում է նաեւ Օրմանյան պատրիարքը: Դրա օգտագործումը թույլատրում էր նաեւ հրեից Օրենքը (Ղեւտ. ԺԱ 22)[153]: Իսկ ինչ վերաբերում է Էբիոնիտների ավետարանում մորեխներին մեղրե բլիթներով փոխարինելուն, ապա, ամենայն հավանականությամբ, պատմության բանավոր փոխանցման արդյունքում շփոթություն է առաջ եկել ἀκρίδες (akrides)՝ մորեխներ[154] եւ εγκρίδες (enkrides)՝ բլիթներ, բառերի միջեւ: Տարբերակ է նաեւ այն, որ էբիոնիտները, մերժելով մսից պատրաստվող կերակուրները, «մորեխները» փոխարինեին «բլիթներով», սակայն սա այնքան էլ համոզիչ չէ. դժվար թե մորեխը մսե կերակուր համարվեր[155]: Մկրտչի եւ Քումրանի միջեւ ընդհանուր եզրեր են նաեւ վախճանաբանական գաղափարախոսությունը, ըստ որի Աստծո դատաստանը շուտով պիտի գար[156], եւ ջրի հետ կապված արարողությունները[157] (մկրտությունը եւ եսենական լվացումները):

Սակայն այսքան զուգադիպություններով հանդերձ էլ Մկրտչի եւ Քումրանի միջեւ կապն ապացուցված չէ, եւ կան բազում հանգամանքներ, որոնք անհամապատասխանություն են առաջ բերում, ինչպես, ասենք, Մկրտչի քարոզչությունը ի շահ բոլորի, այլ ոչ միայն յուրայինների, ինչպես եսենների մոտ էր, որոշ տարբերությունները ջրով արարողությունների մեջ[158], ճգնակեցության առկայությունը Քումրանից դուրս այլ վայրերում նույնպես, Հովհաննեսի շփումը նաեւ անմաքուրների՝ հեթանոսների հետ (հմմտ. Ղուկ. Գ 14): Այսպես, եթե անգամ Հովհաննես Մկրտիչը կապված է եղել Քումրանի հետ, Ավետարաններում ներկայացված ժամանակաշրջանում արդեն այդ կապն այլեւս գոյություն չունի[159]:

153 Համապատում, էջ 58:

154 Նկատենք, որ «մորեխներ», իրականում հին հունարեն լեզվում լինում է "ἀκρίδος" (akridos). վերեւում փվել ենք բառի այն ձեւը, որը առկա էր մեր օգտագործած աղբյուրում:

155 "Апокрифы древних христиан", стр. 71.

156 "Иисус и Евангелия, стр. 265. "Кумранская община", стр. 212. "Encyclopedia of early Christianity". Second edition, 1998, p. 127 (այսուհետեւ՝ "Encyclopedia of early Christianity").

157 "Иисуи Евангелия", стр. 265. "Жизнь Иисуса", стр. 230.

158 "Кумранская община", стр. 222-223.

159 "Иисус и Евангелия", стр. 265. "Жизнь Иисуса", стр. 230. "Новый библейский словарь", стр. 156.